ԱՆԻՆ ԱՐՔՈՒՆԻ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԵՎ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Բագրատունյաց թագավորության սկզբնական շրջանում (IX դ. վերջերից մինչև X դ. կեսերը) պետության վարչական կենտրոնը մի քանի անգամ տեղափոխվել է՝ յուրաքանչյուր նոր թագավորի գահակալությամբ հաստատվելով վերջինիս նստավայրում։ Առաջին Բագրատունի թագավոր Աշոտ Ա-ի գահանիստը գտնվում էր Բագարանում, որը Հովհաննես Դրասխանակերտցին անվանում է թագավորանիստ ավան[1]։ Աշոտի ավագ որդու Սմբատի (Սմբատ Ա՝ 890—914) օրոք գահանիստ դարձավ նրա «սեփական կալվածք» Երազգավորս գյուղաքաղաքը[2], իսկ Բագարանը բաժին հասավ Սմբատի կրտսեր եղբորը՝ սպարապետ Շապուհին։ Այն դարձավ սպարապետի նստավայր Շապուհի և նրա որդի Աշոտի սպարապետության տարիներին[3]։

Սմբատի մահվանից հետո գահը Երազգավորսի հետ ժառանգեց նրա ավագ որդին՝ Աշոտը (Աշոտ Բ Երկաթը) և այդ պատճառով էլ նրա գահակալության օրոք (914—928) վարչական կենտրոն մնաց Երազգավորսը[4]։ Աշոտի կրտսեր եղբայր իշխանաց իշխան Աբասին բաժին հասավ Վանանդ գավառը Կարս բերդով[5], որը Սմբատ Ա-ի ժամանակ թագավորական ընտանիքի ապաստանավայրն էր։ Այնտեղ վտանգի ժամանակ պատսպարվում էին արքայի մերձավորները և պահվում էին արքունի գանձերը[6]։ Մինչև 928 թ. Կարսը Աբասի նստավայրն էր, իսկ վերջինիս գահակալությամբ (928—953) որպես գահանիստ փոխարինեց Երազգավորսին։

Պետության վարչական կենտրոնի այդպիսի հաճախակի փոփոխումները պայմանավորված էին ժամանակին բնորոշ հողատիրության բնույթով. յուրաքանչյուր թագավոր, միաժամանակ լինելով խոշոր հայրենատեր-հողատեր, ուներ իր տիրությունների վարչական կենտրոնը՝ աթոռանիստը։ Վերջինս նրա սեփականատերերի թագավորության տարիներին դառնում էր գահանիստ և կատարում մայրաքաղաքի դեր, իսկ նախորդ թագավորի նստավայրը կորցնում էր այդ դերը և մնում որպես տվյալ իշխանության կենտրոն։ Այդ

---

1 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 144։

2 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 144, 183—184, 197, 207, 218, «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերականն», ՍՊԲ, 1885, էջ 181։

3 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 194, 340։

4 Նույն տեղում, էջ 304։

5 Գարեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 172։ Ասողիկ, էջ 172։

6 Կարսի բերդը ծառայում էր որպես արքունի կայան։ 897 թ. Ատրպատականի Ավշին ամիրայի արշավանքի ժամանակ այստեղ ապաստանել էին հայոց թագուհին՝ Սմբատ Ա-ի կինը, նրա հարսը և ազատների կանայք (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 178—180)։

առումով էլ Բագարանն ու Երազգավորսը, սկզբնական շրջանում նաև Կարսը, դեռ իսկական իմաստով մայրաքաղաքներ չէին, այլ գահակալների դղյակ-նստավայրեր, որոնք գահանիստի դեր էին կատարում։

Սեփականատիրական հողատիրությամբ պայմանավորված՝ գահանիստի հաճախակի փոփոխումը խանգարում էր, որ այն դառնա համապետական կենտրոն ու կայուն կապ հաստատվի երկրի տարբեր մասերի և հատկապես ծայրագավառների հետ։ Դրա համար էլ Բագրատունյաց թագավորությանն անհրաժեշտ էր ունենալ մշտական մայրաքաղաք։ Սակայն Սմբատ Ա-ի և Աշոտ Բ-ի թագավորության տարիներին հարևան արաբական ամիրայությունների հետ մշտական բախումների հետևանքով այդ խնդիրն անիրագործելի էր։

Խաղաղ շրջանն սկսվեց Աբասի օրոք և աստիճանաբար Կարսում կենտրոնացավ վարչական իշխանությունը։ Բացի այդ, Աբասին հաջողվեց կաթողիկոսի նստավայրը տեղափոխել Կարս, որտեղ մայր աթոռի համար կառուցվեց կաթողիկե եկեղեցին։ Այստեղ որոշ ժամանակ աթոռակալեց Վարագա վանքից եկած կաթողիկոս Անանիա Մոկացին[7]։ X դ. 40-ական թվականներին Անանիա Մոկացին Կարսը անվանում է թագափորանիստ շահաստան, իսկ Ասողիկը՝ քաղաք[8]։ Դա վկայում է, որ այդ տարիներին Կարսն արդեն բերդավանից դարձել էր քաղաք[9]։ Միաժամանակ Բագրատունյաց ոստանի կենտրոնը տեղափոխվեց Վանանդ, իսկ Բագարանի ու Երազգավորսի փոխարեն սկսեց բարձրանալ Կարսը։ Այն մայրաքաղաք մնաց նաև Աբասի հաջորդ Աշոտ Գ-ի (Ողորմածի՝ 953—977) գահակալության սկզբնական շրջանում։ Նրա սեփականությունը հանդիսացող Ալամանն ու գյուղաքաղաք Տեկորը գտնվում էին Շիրակում[10], բայց դրանցից ոչ մեկը չդարձավ թագավորանիստ, քանի որ Աշոտը գահանիստը թողեց Կարսում։ Այդ հանգամանքը պատահական չպետք է համարել։ Կարծում ենք դրանում դրսևորված էր արքունիքի առաջին քայլը՝ մշտական գահանիստ ունենալու ուղղությամբ։ Բայց սկսված միջոցառումները խոչընդոտվեցին, շուտով Աշոտն արքունիքը փոխադրեց Անի։

Ինչո՞վ էր պայմանավորված այդ տեղաշարժը։

Խոսելով Աշոտ Ողորմածի Անի տեղափոխվելու մասին, ուսումնասիրողները նշում են միայն կատարված փաստը և չեն բացատրում դրա պատճառները։ Միայն Լեոն է արծարծել այդ հարցը. նրա կարծիքով մայրաքաղաքը տեղափոխվեց Անի, որովհետև այն Շիրակի ամենախոշոր կենտրոնն էր և միայն նա կարող էր «որոշ դույն հաղորդել Բագրատունյաց թագավորությանը, որոշ կնիք դրոշմել նրա կերպարանքի վրա։ Այդ դերը չկարողացան կատարել ո՛չ Բագարանը, ո՛չ Երազգավորսը, ո՛չ էլ Կարսը... այս քաղաքը (Անին—Ռ. Մ.) պիտի դառնար Բագրատունյաց թագավորության կենտրոնը։ Այսպես պահանջում էին նրա թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական շահերը։ Այդ անհրաժեշտությունը զգացել էին անշուշտ նաև Աշոտի նախորդները,

---

7 Ասողիկ, էջ 172, Մ. Օրմանյան, Ազգապատում, մաս Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1087։

8 «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից» («Արարատ», 1897, մարտ, էջ 133), Ասողիկ, էջ 172։

9 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 80։

10 Ն. Մարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 194, 207, Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 125, 133։

բայց իրագործելու բախտը վիճակվեց միայն սրան։ Խոշոր ձեռնարկությունները նախաձեռնող և վճռականությամբ օժտված բնավորություններին են տրված»[11]։

Լեոյի հետ համաձայնվել չենք կարող, քանի որ չնայած Անին քաղաք էր դարձել մինչև մայրաքաղաք դառնալը[12], այնուամենայնիվ այդ ժամանակ Կարսից մեծ չէր։ Ուրեմն, տեղափոխման համար կային այլ պատճառներ։

Եթե խոշոր հարցերի լուծումը Լեոն վերագրում է գահակալի նախաձեռնությանն ու վճռականությանը, ապա Աշոտ Գ-ի նախորդները՝ Աշոտ Ա-ն, Սմբատ Ա-ն և Աշոտ Բ-ն, վճռականությամբ չէին զիջում նրան։ Բայց նրանք չտեղափոխվեցին Անի, որովհետև դրա անհրաժեշտությունը չկար։ Այդպիսին առաջ եկավ միայն X դ. 50—60-ական թվականների սահմանագծին, և դա պատահական չէր։ 949 թ. Բյուզանդիան Հայաստանի արևմուտքում արաբներից նվաճել էր մի շարք գավառներ՝ Կարինի շրջանը, Բասենը, Հավնունիքը[13] և այնտեղ տեղծել ռազմավարչական միավոր՝ բանակաթեմ, որը հենակետ էր Բագրատունյաց թագավորության դեմ կայսրության ագրեսիվ ոտնձգությունների համար։ Նորաստեղծ բանակաթեմը սպառնալիք էր ստեղծում նաև իրենից ոչ հեռու գտնվող Կարսի համար։ Մեր կարծիքով հենց այդ է ստիպել Աշոտ Ողորմածին՝ իր նստավայրը տեղափոխել երկրի խորքը։ Անվտանգ մայրաքաղաք ունենալու ակնկալությամբ նախ փորձ է արվում Շադդադյաններից աղատել հինավուրց մայրաքաղաք Դվինը։ Քուրդ պատմիչ Մունաջջիմ-բաշին հաղորդում է, որ 953 թ. Աշոտը մեծ զորք հավաքելով հարձակվել էր Դվինի վրա, որտեղ այդ ժամանակ իշխում էր Մուհամմադ իբն Շադդադը։ Սակայն հարձակումն ապարդյուն էր անցել և քաղաքը գրավել չէր հաջողվել[14]։

Դրանից հետո թագավորանիստ է ընտրվում Անին։ Մի քանի կարևոր պարագաներ պայմանավորել էին նոր մայրաքաղաքի հարցը լուծել հօգուտ այս քաղաքի. այն գտնվում էր հայոց թագավորության համարյա կենտրոնամասում և միաժամանակ Բագրատունյաց ոստանի գլխավոր շրջան հանդիսացող Շիրակում։ Բացի այդ, շրջակա ձորերը և Ախուրյան գետը դյուրացնում էին նրա պաշտպանությունը։ 961 թ. Անին հռչակվեց մայրաքաղաք[15], իսկ Կարսը բաժին տրվեց Աշոտի եղբայր Մուշեղին[16]։

---

11 Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1967, էջ 577, հմմտ. Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959, էջ 100։

12 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 75—76։

13 «Կոստանդին Միրանածին», թարգմանություն բնագրից Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 16—17, Ասողիկ, էջ 179։

14 Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-բաշիի XI—XII դդ. անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին («Բանբեր Մատենադարանի», 1962 (№ 6), էջ 477)։

15 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 4։ Չնայած պաշտոնական հանդիսությունները տեղի ունեցան 961 թ., անկասկած, քաղաքը վերակառուցելու ուղղությամբ աշխատանքները սկսվել էին տարիներ առաջ։ Նախ անհրաժեշտ էր ապահովել նրա պաշտպանությունը՝ պարսպապատել, կառուցել թագավորի ապարանքը, որից հետո արքունիքը կարող էր տեղափոխվել նոր վայր։ Քաղաքի կառուցապատումը շարունակվեց Սմբատ Բ-ի օրոք։

16 Ասողիկը (էջ 180) այդ մասին գրում է. «Եւ զկնի Աբասայ թագաւորեաց Աշոտ որդի նորա, որ և չահանշահ կոչիւր ամս Իե։ Եւ Մուշեղ եղբայր նորա առ նովաւ թագաւորեաց ի Կարսս»։ Դրան համահնչյուն է XII դ. Անանուն հեղինակի վկայությունը. «...եւ զկնի սորա

Անին հայոց Բագրատունիների արքունիքի վերջին հանգրվանը հանդիսացավ։ Բագրատունյաց թագավորության պատմության երկրորդ շրջանը ցույց տվեց, որ Աշոտ Ողորմածին հաջողվեց լուծել պետության կենտրոնացման համար կենսականորեն կարևոր նախապայմաններից մեկը՝ մշտական մայրաքաղաքի ընտրությունը։ Աշոտից հետո՝ 977—1045 թթ. Անիում գահակալող Բագրատունի վերջին չորս թագավորներից ոչ մեկն այլևս մայրաքաղաքը չտեղափոխեց նոր վայր, չնայած նրանցից յուրաքանչյուրն ուներ իր իշխանական նստոցը (Սմբատ Բ-ն՝ Երազգավորսը, Գագիկ Ա-ն՝ Մրենը կամ Տեկոր ավանը, Հովհաննես-Սմբատը՝ հավանաբար Բագարանը[17], իսկ Գագիկ Բ-ինը մեզ անհայտ է)։ Բայց գահակալելիս նրանք սեփական աթոռանիստից տեղափոխվում էին Անի։ Դա գահանիստ կենտրոնին տիրանալու բոլորովին այլ կարգ էր, քան գոյություն ուներ Բագրատունի առաջին թագավորների օրոք։ Սմբատ Ա-ն, Աշոտ Բ-ն և Աբասը հայրենատեր ֆեոդալի իրավունքով էին սեփական դղյակները դարձնում աթոռանիստ։ Այդ պատճառով Բագարանը և Երազգավորսը ժամանակավորապես էին դառնում մայրաքաղաք՝ նրանց սեփականատերերի թագավորելու դեպքում։

Աշոտ Ողորմածը հասավ այն բանին, որ յուրաքանչյուր հայոց թագավոր ներկայացնի ոչ թե իր դինաստիական ճյուղը (Բագարան, Երազգավորս, Կարս), այլ Շիրակի Բագրատունիներին ամբողջությամբ։ Միայն այդ եղանակով էր հնարավոր հիմնել մշտական մայրաքաղաք մի պետության ներսում, որը խոշոր իշխանական տների միություն էր։ Գահակալության նման կարգի միջոցով արքունիքը, անկասկած, նպատակ ուներ ստեղծել մշտական գահանիստ և համապետական կայուն քաղաքական կենտրոն։ Իշխանական աթոռանիստն այդ նպատակին չէր կարող ծառայել, քանի որ երկրի տնտեսական անջատվածության պայմաններում այն հանդիսանում էր տվյալ իշխանության տնտեսական, քաղաքական և ռազմական կենտրոնը[18]։

Բագրատունյաց պետության առաջին մայրաքաղաքները նույնպես իշխանանիստ քաղաքներ էին և այդ պատճառով էլ չկարողացան մշտական պետական կենտրոններ դառնալ։ Խնդիրը լուծելու համար արքունիքին անհրաժեշտ էր մայրաքաղաքը դուրս բերել իշխանական աթոռանիստից և այն հաստատել այնպիսի մի հողաբաժնում, որն արքունի սեփականություն էր, պատկանում էր ամբողջ տոհմին և որը տոհմի անունից տնօրինում էր թագավորը։ Քաղաքը նման վայրում արդեն ընդհանուր տոհմական ենթակայություն ուներ, իսկ եթե պետական իշխանությունը գտնվում էր տվյալ տոհմի ձեռքում՝ միաժամանակ նաև ընդհանուր պետական ենթակայություն։

Աղբյուրների վկայություններից երևում է, որ Բագրատունիների արքունի հողաբաժինը հիմնականում կենտրոնացված էր Շիրակում[19], չնայած այդ-

---

(Արասի—Ռ. Մ.) Աշոտ, որդի իւր, ամս ԻԵ և զեղբայր իւր՝ զՄուշեղ Կարուց կացոյց թագաւորս («Մանր ժամանակագրություններ», հ. 2, հրատարակեց Վ. Հակոբյանը, Երևան, 1956, էջ 501)։

17 Անանիա Մոկացի, նշվ. աշխ., էջ 144, Ն. Մարգիսյան, նշվ. աշխ., էջ 197, 202—203, 206։ Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 133—134, 138—139, Н. Эмин, Армянские надписи в Карее, Ани и окрестностях последнего, М., 1881, стр. 77, 82.

18 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 69, 122, հ. 2, էջ 115, 155։

19 Արքունի հողաբաժինն առանձնահատուկ տեղ էր գրավում տոհմական ոստանում։ Այն օգտագործվում էր ամբողջ դինաստիայի շահերի համար, տրվում էր հավատարիմ վասալ իշ-

այիսի հողեր կային նաև այլ երկրամասերում, օրինակ Աղստևի հովտում (Զորոփոր գավառ) և այլ շրջաններում։ Շիրակում միակ քաղաքը Անին էր, որը X դ. 50—60-ական թվականներին նույնպես արքունի սեփականություն էր, այլ կերպ Աշոտ Գ-ն այն չէր ընտրի որպես գահանիստ։ Աշոտ Գ-ի նախաձեռնությամբ արքունիքը տեղափոխվեց Անի և դրանով իսկ լուծվեց մշտական մայրաքաղաքի հարցը։ Այդ միջոցառումը սերտորեն կապված էր կենտրոնաձիգ համապետական մյուս վերափոխումների հետ, որոնք նույն Աշոտի օրոք իրականացնում էր Բագրատունյաց արքունիքը։ Առաջին հերթին դա վերաբերում է գահակցության ինստիտուտին։

Աշոտ Գ-ն ուներ երեք որդի, որոնցից յուրաքանչյուրն իր զարմերով թագավորական ընտանիքի առանձին շառավիղ էր։ Ավագ որդի Սմբատը հոր գահակալության օրոք ճանաչվել էր թագաժառանգ և նշանակվել գահակից։ Նա առնվազն 966 թ. մասնակցում էր երկրի կառավարմանը և բացի այդ արքունիքի ներկայացուցիչն էր Տաշիր—Զորագետի թագավորությունում[20]։ Եթե կար գահակից, ուրեմն նախապես հայտնի էր, թե ի դեմս վերջինի ապագայում որ ճյուղն է ժառանգելու գահը և տեր դառնալու գահանիստ քաղաքին։ Ըստ այդ կարգի 977 թ. Սմբատը Շիրակավանից եկավ արքունի աթոռանիստ Անի և նստեց «թագաւոր ամենայն տանն Հայոց»-ի գահին, ներկայացնելով Շիրակի ֆեոդալական տունը։ Աշոտ Գ-ի այս ձեռնարկության շնորհիվ թագավորական իշխանությունն ամբողջությամբ կենտրոնացավ Շիրակի Բագրատունիների ձեռքում, դարձավ նրանց մենաշնորհը։ 961 թ. հետո գահանիստ կենտրոնն այլևս չտեղափոխվեց ո՛չ Կարս և ոչ էլ որևէ այլ վայր։ Բագրատունիների մյուս տոհմաճյուղերը չկարողացան խլել այդ արտոնությունը Շիրակի տոհմակիցներից, որոնց տարբեր ճյուղերն Անիում հերթով նստում էին գահին։ Դրա շնորհիվ Շիրակը դարձավ այն միակ մարզը, ուր կարող էր գտնվել հայոց թագավորի նստավայրը։ Շիրակի կենտրոն Անին որպես ընդհանուր պետական ենթակայության քաղաք արդեն համահայկական մայրաքաղաք էր։ Այստեղ կենտրոնացան պետական գերագույն իշխանության ապարատը՝ արքունի գործակալությունները, ինչպես նաև թագավորի ապարանքը, կաթողիկոսարանը և այլն։ Անանիա Մոկացին կաթողիկոսի նստավայրը տեղափոխեց Անիի մոտակայքում գտնվող Արգինա գյուղաքաղաքը, որտեղ նրա հաջորդ Խաչիկ Ա Արշարունին կառուցեց կաթողիկե եկեղեցի[21]։ Սմբատ Բ-ն սկիզբ դրեց նոր կաթողիկեի կառուցմանը Անիում, որը ավարտվեց 1001 թ.՝ Գագիկ Ա-ի օրոք[22]։ Այսպիսով կաթողիկոսարանը տեղափոխվեց

խաններին, սովորաբար զինվորական ծառայության կամ գործակալության պաշտոնավարության դիմաց և ըմբոստության կամ անհնազանդության դեպքում կարող էր ետ խլվել։ Այնտեղ էին գտնվում ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող ամրությունները, արքունի «կայանը» և այլն։ Շիրակում Բագրատունիների վասալ իշխաններից Վահրամ Պահլավունուն պատկանում էր Մարմաշենը, իսկ Հովհաննես-Սմբատի հոգաբարձու սյունեցի Վեստ Սարգսին՝ Խծկոնքը և Սուրմալին Ծակատք գավառում (Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 126, 127, 148, Ն. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 209, И. А. Орбели, Надписи Мармашена (Избранные труды, Ереван, 1963, стр. 442).

20 Մանրամասն տե՛ս «Գահակցության ինստիտուտը Աշոտ Գ-ի օրոք» («Լրաբեր», 1977, № 1)։

21 Ասողիկ, էջ 185, 187։

22 Նույն տեղում, էջ 187, 256։

մայրաքաղաք, որաեղ կենարոնացավ թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր գերագույն իշխանությունը։

Շարադրած նյութից հնարավոր է եզրակացնել, որ Աշոտ Ա-ի գահակալության տարիներից (885—890) մինչև 961 թ. Բագավորական իշխանությունը Հայաստանում Շիրակի ֆեոդալական տան ներսում անցնում էր ճյուղից ճյուղ։ Աշոտ Ա-ից սկսած հերթականությամբ իշխեցին Բագրատունիների Բագարանի, Երազգավորսի և Կարսի ճյուղերը։ Ինչպես տեսանք, Աբասի օրոք (928—953) Բագրատունյաց ոստանի կենարոնը տեղափոխվեց Վանանդ—Արշարունիք, որից 961 թ. նորից վերադարձավ Շիրակ։ Անին մայրաքաղաք դառնալով՝ թագավորական իշխանությունը ոչ թե անցավ Բագրատունիների Անիի ճյուղին (այդպիսի ճյուղ ընդհանրապես չառաջացավ), այլ այդ քաղաքը դարձավ Հայոց թագավորի և միաժամանակ Բագրատունի ազգապետի տոհմական գահանիստ կենարոն և մնաց այդպիսին մինչև 1045 թ. Բյուզանդիայի կողմից նվաճվելը։

Մշտական մայրաքաղաքի հիմնումը Աշոտ Գ-ի բոլոր վերափոխումներից թերևս ամենագլխավորն էր։ Այն անբաժանելի էր մյուս միջոցառումներից, որոնք կոչված էին ուժեղացնելու կենարոնական իշխանությունը և համախմբելու ամրողջ պետությունը Բագրատունյաց գահերեցի շուրջը՝ գահակցություն, կաթողիկոսարանի մշտական աթոռակալումը Անիում, երկրի ծայրամասերի և պետության կենտրոնի նպատակների ամրապնդումը՝ վասալիտետի միջոցով տեղական ֆեոդալներին ենթարկելով Հայոց թագավորին և այլն։ Նրանց հետ միասին մշտական մայրաքաղաքի հարցը մի ամբողջություն է կազմում և ցույց տալիս, որ Աշոտ Գ-ի գերը Բագրատունյաց Հայաստանի պատմության համար շատ ավելի մեծ էր, քան սոսկ «Ողորմած» լինելը։ 961 թ. սկսվեց Բագրատունյաց թագավորության պատմության մի նոր ժամանակահատված, որը Լեոյի արտահայտությամբ կարելի է անվանել «Անիական շրջան»։

АНИ — ПРЕСТОЛЬНЫЙ ГРАД И СТОЛИЦА

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

В первый период существования Багратидского царства (конец IX—первая половина X вв.) резиденция армянских царей несколько раз менялась. Столицами поочередно были Багаран, Еразгаворс и Карс.

Однако интересы дальнейшего укрепления государства требовали создания постоянного политического центра. С этой целью в 961 г. Ашот III Милостивый (953—977) после перехода в Ани превратил его в фамильный (общегосударственный) престольный град, общеродовую собственность Ширакских Багратидов. Благодаря этому Ани стал постоянной, общеармянской столицей, где до 1045 г. резидировали цари Армении, представители различных ветвей Ширакского феодального дома.